ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՈՇՈՒՄ
ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի **(այսուհետև՝ Ծրագրի)** 6.1 ենթակետի, ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի (**այսուհետև՝ Երիտասարդական խորհուրդ**) 20.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված աշխատասենյակից օգտվելու ընթացակարգի **(այսուհետև՝ Ընթացակարգ)** 2-րդ կետի պահանջներով,

հաշվի առնելով Երիտասարդական խորհրդի կողմից լիազորությունների ժամկետը լրացած լինելու հիմքով Աշխատասենյակից օգտվելու համար հայտեր ընդունելու մասին որոշում կայացնելու անհնարինությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 2021 թվականի հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածում Աշխատասենյակից օգտվելու համար ընդունել հայտեր՝ սույն որոշումը հրապարակելու օրվանից մինչև 2021 թվականի հունիսի 29-ը ներառյալ:

2. Սահմանել, որ՝

1) Աշխատասենյակից օգտվելու հայտերն ընդունվում են էլեկտրոնային փոստով (ստորագրված և սկանավորված տարբերակով) info@advocates.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ը, ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում:

2) Հարցազրույցը կանցկացվի ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում 2021 թվականի հունիսի 30-ին:

3) Փոստով ուղարկված հայտերը չեն համարվի ընդունված, եթե ՀՀ փաստաբանների պալատը ծրարը փաստացի ստանա 2021թ. հունիսի 29-ից հետո:

3. Հաստատել Աշխատասենյակից օգտվելու համար հայտի ձևը՝ համաձայն հավելվածի:

17 հունիսի, 2021թ.
թիվ 2-Լ
ք.Երևան

4. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ հայտերի ընդունման վերաբերյալ հայտարարությունը տեղադրել ՀՀ փաստաբանների պալատի ինտերնետային կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահի տեղակալ՝

Հարութ Ակլունց

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
տեղակալի 17.06.2021թ. թիվ 2-Լ որոշման

ՀՀ փաստաբանների պալատին

_____ից
(անուն, ազգանուն)

արտոնագրի № _____տրված՝_____ թ.

հասցե՝ _____

էլեկտրոնային փոստի հասցե՝_____

հեռախոս՝ _____

«____» հունիս 2021թ.

ՀԱՅՏ

Սույնով հայտնում եմ, որ ցանկանում եմ օգտվել Աշխատասենյակից:

Մասնագիտական ուղղվածությունը՝ _____
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

Աշխատանքային գործունեության իրականացման վերաբերյալ տեղեկություն[1]՝_____

Գիտական և/կամ մանկավարժական բնագավառում աշխատանքային գործունեություն իրականացնելու վերաբերյալ տեղեկատվություն[2]՝ _____

_____

_____

Հայտնում եմ, որ՝

- չունեմ աշխատասենյակ,
- համաձայն եմ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրով և ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի 20.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված աշխատասենյակից օգտվելու ընթացակարգով սահմանված դրույթների հետ,
- համաձայն եմ անվճար իրավաբանական օգնություն տրամադրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրով և ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի 20.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված աշխատասենյակից օգտվելու ընթացակարգով սահմանված նվազագույն քանակով:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

---

[1] Պետք է նշվի ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական աշխատանքային գործունեության մասին

[2] Նշվում է գործատու(ներ)ի վերաբերյալ տեղեկություն, մասնավորապես՝ գործատու(ներ)ի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը), աշխատաժամանակի տևողությունը